The European Union's "Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia" Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief
Համառոտագիր

This project is funded by
the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրամիության կողմից

BRITISH COUNCIL

ICHD

This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ

International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

ՀՀ միգրացիոն համակարգի ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական մարտահրավերը

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Աշխատանքային միգրացիային նվիրված վերջին հետազոտություններն իրավամբ բացահայտում են սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական իրավիճակի վրա միգրացիոն գործընթացների խորն ազդեցությունները: Այդուհանդերձ, որակական այս նոր երևույթով պայմանավորված հնարավորություններն ու վտանգները, կարծես, պատշաճ կերպով արտացոլված չեն երկրի զարգացման քաղաքականության մեջ:

Քանակից որակի ճանապարհին

Աշխատանքը շարունակում է մնալ երկրից մեկնելու որոշում կայացնելու հիմնական դրդապատճառներից մեկը: Այսպես, 2005-2007թթ ընթացքում աշխատանքային միգրացիան ընդգրկել է տնային տնտեսությունների շուրջ 15 տոկոսը: Ընդ որում, միգրացիոն հոսքերի հաշվեկշռի ընդհանուր դրական միտումների պարագայում, աշխատանքային արտագաղթը շարունակում է աճել:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ արտերկրում աշխատող ունեցող տնային տնտեսությունների շուրջ 47 տոկոսն առանց ընտանիքի միգրանտ-անդամի կողմից ուղարկվող դրամական օգնության կարող էին հայտնվել բնակչության ամենաաղքատների խմբում: Ավելին, եթե հանրապետության տնային տնտեսությունների եկամուտներից հանենք արտերկրում աշխատողների կողմից իրենց ընտանիքներին տրամադրվող դրամական աջակցությունը, ապա աղքատների թիվը երկրում կավելանա 20 տոկոսով, և աղքատությունը նույն մակարդակին պահելու համար անհրաժեշտ կլիներ բազմակի անգամ մեծ պետական բյուջե: Հետևությունն ակներև է. աշխատանքային միգրացիան էականորեն թեթևացնում է հանրապետության տնային տնտեսությունների զգալի մասի սոցիալական բեռը՝ զսպելով աղքատության մակարդակը երկրում:

Արժանահիշատակ է, որ արտերկրից փոխանցումները հիմնականում օգտագործվում են սպառողական նպատակով, մի մասն էլ ուղղվում է ընտանիքի անդամների կրթությանը: Ընդ որում, միգրանտների փոխանցումների շնորհիվ արվող ներդրումների ծավալը կրթության ոլորտում ավելանում են: Հայաստանյան շատ բանկեր միգրանտների կողմից ուղարկվող գումարները սկսել են դիտարկել որպես տնային տնտեսության համար կայուն եկամուտի աղբյուր և բավարար հիմք՝ տնտեսություններին սպառողական վարկեր տրամադրելու համար:

Դրամական փոխանցումների ծավալի առյուծի բաժինը կատարում են 5-10 տարի արտերկրում գտնվող միգրանտները: Մինչդեռ մինչև մեկ տարի կամ տասնհինգ տարուց ավելի արտասահմանում բնակվող մեր համաքաղաքացիների կողմից գումարներ գրեթե չեն փոխանցվում: Ըստ ամենայնի, տաս տարի արտերկրում ապրելուց հետո միգրանտներն էապես կորցնում են կապը հայրենիքի հետ, թերևս՝ ընտանիքներին և հարազատներին իրենց մոտ տանելու պատճառով:

Ի վերջո, արտերկրում աշխատողների դրամական փոխանցումների ծավալը (2007թ. տվյալներով) հավասար է Հայաստանի համախառն ներքին արդյունքի գրեթե մեկ հինգերորդին, համարժեք է երկրում գյուղատնտեսական արտադրանքի ծավալին և ավելին է, քան Հայաստանի առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն:

Անտառը ծառերի հետևում

Երկրում աղքատության ընդհանուր պատկերը մեղմելով, սակայն, միգրացիոն մեծ հոսքերը, նոր մարտահրավերներ են ստեղծում երկրի անվտանգության ապահովման խնդրում:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Ցավո՛ք այս ճակատագրական գործընթացների և երևույթների հաղեպ ձևավորված միասնական պետական քաղաքականություն չկա: Միգրացիայի կարգավորման պետական քաղաքականությունը սահմանափակվում է այս ոլորտում վարչական գործառույթներով, և երկրի սոցիալ տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերում որևէ էական դեր չունի: Ավելին, բնակչության զբաղվածության, և մասնավորապես աշխատանքային միգրացիայի, խնդիրները ներկայում ընկալվում են առավելապես որպես սոցիալական խնդիրներ՝ անտեսելով դրանց տնտեսական ռազմավարական նշանակությունը:

Մինչդեռ անհրաժեշտ է վերաիմաստավորել այդ գործառույթներն ու գիտակցել դրանց էական նշանակությունը երկրի տնտեսական զարգացման միջնաժամկետ և հեռանկարային ծրագրերում:

Հենման կետ

Հասունացել է երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության և ռազմավարության մեջ միգրացիայի բաղադրիչը պատշաճ կերպով ներառելու հրամայականը: Անհրաժեշտ է կենտրոնական դերակատարում հատկացնել միգրացիոն քաղաքականությանը՝ ապահովելով դրա բաղադրիչները երկրի զարգացման համար կարևորագույն. աղքատության հաղթահարման, բարենպաստ տնտեսական միջավայրի ձևավորման, գյուղական զարգացման, երկրի անվտանգության, օրենքի գերակայության ապահովման և այլ ոլորտներում:

Կարևորվում է նաև միգրացիայի ոլորտում պետական քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ արդյունավետ համակարգի ձևավորումը: Թերևս միգրացիայի կարգավորման ներկա ապակենտրոնացված մոդելի գործունեության առավել համակարգումը, շահագրգիռ պետական մարմինների միջև արդյունավետ միջգերատեսչական համագործակցության շարունակական խթանումը և միգրացիայի ոլորտում պետական քաղաքականությունը ավելի լուսանցքային չդարձնելու նպատակով այս ոլորտում գործառույթների հետագա մասնատումից խուսափելը կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության և ռազմավարության մեջ միգրացիայի բաղադրիչը պատշաճ ներառմանը:

Հաշվի առնելով, որ արտերկրում աշխատանքային միգրանտների համար ցանկալի պայմաններ ստեղծելու նպատակով այլ երկրների միգրացիոն քաղաքականության վրա ազդելու Հայաստանի Հանրապետության հնարավորությունները սահմանափակ են, միգրացիայի գործուն պետական քաղաքականությունը պետք է հիմնվի նախ և առաջ սեփական երկրում առկա գործիքակազմի վրա:

Մասնավորապես, պետական քաղաքականությունը կարող է նպատակաուղղված լինել մեկ երկրից միգրացիոն կախվածության մեղմմանը՝ դիվերսիֆիկացնելով աշխատանքային միգրանտների հնարավորությունները՝ լեզուների իմացությունը, մշակութային համատեղելիությունը, աշխատուժի մրցունակությունը, մուտքի-ելքի երկկողմ համաձայնագրերը և այլն: Այս առումով ներպետական քաղաքականության կարևորագույն գործիք է, օրինակ, մասնագիտական և միջնակարգ մասնագիտական կրթության մրցունակ համակարգը, որի զարգացման ռազմավարությունը կարող է էականորեն հաշվի առնել աշխատանքային միգրացիայի գերակայությունները:

Համառոտագիրը մշակվել է 2007թ-ի դեկտեմբերի 20-ին կայացած՝ «Ժողովրդագրական, սոցիալական և տնտեսական ցուցանիշներն ու դրանց զարգացման միտումները որպես մարտահրավեր ՀՀ միգրացիոն քաղաքականությանը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: